ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

**No 14- Լ** **«01» ապրիլի 2025 թ.**

## ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ ՈՐԱԿԵԼՈՒ ՀԱՅՏԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 195-Ն որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված «Գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակող մասնագիտական հանձնաժողովի կողմից գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու կարգ»-ի 4-րդ կետը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ**

1. Հաստատել՝

1) գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու հայտի և գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների ծրագրի ձևերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու հայտի և գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների ծրագրի լրացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

**ՆԱԽԱՐԱՐ՝** **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի ապրիլի 1-ի
N 14-Լ հրամանի

**ՁԵՎ N 1**

Ծածկագիր՝ PRIVATE2025

# ՀԱՅՏ[1]
# ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ ՈՐԱԿԵԼՈՒ

**Ուղարկված է՝** **Ծածկագիր՝**

1. Հայտատուի տվյալները՝

| | |
|---|---|
| | |
| Հայտատուի անվանում (հայ.) | |
| | |
| Հայտատուի անվանում (անգ.) | |
| կազմակերպական-իրավական ձև | Գրանցման հասցե |
| | |
| ՀՎՀՀ | տնօրենի ա.ա.հ. |
| | |
| էլ. փոստի հասցե | հեռախոսահամար |
| | |
| գործունեության նկարագիր | |

2. Ծրագրի վերաբերյալ տվյալները՝

| | |
|---|---|
| | |
| ծրագրի վերնագիր | |
| | |
| գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների անվանումը՝ ըստ տնտեսական գործունեության դասակարգչի | |
| | |
| գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների ակնկալվող սկիզբ և ավարտ | |
| | |
| Հարկային օրենսգրքի որ հոդվածի, որ մասի, որ կետին համապատասխանության պարագայում է ներկայացվում | |

3. Ֆայլեր՝

| |
|---|
| |
| պետական ռեգիստրի վկայականի ֆայլ |
| |
| ծրագրի ֆայլ |
| |
| դիմումի ֆայլ |
| |
| մասնագիտական աշխատանքներ կատարող վարձու աշխատողների տվյալների ֆայլ |

[1] Հայտի ձևը ձևավորվում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի առցանց համակարգի (private.hesc.am, այսուհետ՝ Համակարգ) կողմից որպես .pdf ձևաչափի ֆայլ՝ Հայտում առկա դաշտերը լրացնելուց և ուղարկելուց հետո:

*Հավելված* [2]
*Գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու հայտի*

N _____ «____» _____ 20-- թ.

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ ՈՐԱԿՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հայոցյան,

Խնդրում եմ ընդունել _____ -ի
(Հայտատուի անվանում)

_____ Հայտ(եր)ը և դրան(ց) կից Ծրագիր(ներ)ը՝ գիտական
(Ծածկագր(եր)ով)

հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու մասին եզրակացություն տրամադրելու նպատակով:

☐ *Պայմաններին ծանոթ եմ և ընդունում եմ:*

☐ *Սույնով պարտավորվում եմ նաև, որ գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու վերաբերյալ համապատասխան եզրակացության ստացման դեպքում կիրականացվի վերահաշվարկ այն աշխատակիցների մասով, ովքեր ներգրավված են գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներում: Վերոնշյալ աշխատակիցների անունից ավել հաշվարկված եկամտային հարկի գումարները ենթակա են փոխանցման տվյալ աշխատակիցներին՝* _____
(Հայտատուի անվանում)

*տրամադրվող հարկային արտոնությունների ժամանակահատվածին համապատասխան հաշվարկով:*

_____ -ի տնօրենը _____ _____

*(Հայտատուի անվանում)* *(ստորագրություն)* *(անուն, ազգանուն)*

Կ. Տ

[2] Հավելվածով առաջարկվող դիմումի տեքստը լրացնել Հայտատուի ձևաթղթի վրա և վերբեռնել Համակարգ:

**ՁԵՎ N 2**

**ԾՐԱԳԻՐ**[3]

**ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ**

**1. Ծրագրի վերնագիրը**

| |
|---|
| |

**2. Անոտացիան**

| |
|---|
| |

**3. Ծրագրով ներկայացվող գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների անվանումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված տնտեսական գործունեության դասակարգչի նկարագրի**

| |
|---|
| |

**4. Նպատակները և խնդիրները**

| |
|---|
| |

**5. Արդի վիճակի վերլուծությունը**

| |
|---|
| |

**6. Նորույթը (novelty) և ստեղծարարությունը (creativity)**

| |
|---|
| |

**7. Ծրագրի հետազոտական մասը (մինչև 5 էջ)**

| |
|---|
| |

**8. Իրականացման եղանակները, մեթոդները**

| |
|---|
| |

**9. Ծրագրի աշխատանքների իրականացման փուլերն ու ժամկետները (օրացուցային պլանը՝ ըստ եռամսյակների)**

| |
|---|
| |

**10. Ծրագրի շրջանակում ներառված՝ բացառապես մասնագիտական աշխատանքներ կատարող վարձու աշխատողների (այսուհետ՝ Խումբ) տվյալները** (անուն, ազգանուն, հանրային ծառայությունների համարանիշը (դրա բացակայության դեպքում՝ լիազորված

[3] Ծրագրի ձևի անգլերեն տարբերակը տեղադրված է Համակարգում:

մարմնի տրամադրած՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ տեղեկանքի համարը), կրթությունը հավաստող դիպլոմը)[4]

| Հ/հ | ԱԶԳԱՆՈՒՆ | ԱՆՈՒՆ | ՀԱՅՐԱՆՈՒՆ | ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇ (ՀԾՀ) | ԾՆՆԴՅԱՆ օօ/աա/տտտտ | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (նշել առավել բարձր մակարդակի կրթությունը) | ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ | ՊԱՇՏՈՆ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՁԱՓ (ՀՀ ԴՐԱՄ, ՆԵՐԱՌՅԱԼ ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ) | Դերակատարությունը հետազոտական ծրագրում (ՀՀ ԴՐԱՄ, ՆԵՐԱՌՅԱԼ ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | | | | | | |
| ... | | | | | | | | | | |

**11. Տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները**

**12. Վերջին հինգ տարիների ընթացքում Խմբի կողմից տպագրված հրապարակումները կամ արտոնագրերը**

**13. Առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները, այդ թվում՝ նախատեսվող ֆինանսական միջոցները**

**14. Ստեղծվող աշխատատեղերը**

**15. Ակնկալվող արդյունքը**

- ☐ նոր տեխնոլոգիա
- ☐ կատարելագործված տեխնոլոգիա (տեխնոլոգիական գործընթաց)
- ☐ ծրագրային փաթեթ
- ☐ նախատիպ կամ մոդել
- ☐ փորձնական կամ լաբորատոր նմուշ
- ☐ այլ

**16. Ակնկալվող արդյունքի՝**

**1) տեխնիկական ցուցանիշները**

**2) քանակական և որակական ցուցանիշները** (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))

[4] Համապատասխան տեղեկատվությունը լրացվում է .xlsx ձևաչափով, որը հանդիսանում է Ծրագրի անբաժանելի մաս:

| Հ/h | Ցուցանիշի նկարագիր | Քանակ | Ժամկետ |
|---|---|---|---|
| 1. | | | |
| ..... | | | |

**3) նմանակների հետ համեմատության ցուցանիշները՝**

հիմնական տեխնիկական առավելությունները և/կամ թերությունները

| |
|---|
| |

հիմնական տնտեսական առավելությունները և/կամ թերությունները

| |
|---|
| |

այլ

| |
|---|
| |

**17. Օգտագործված գրականության ցանկը**

| |
|---|
| |

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի ապրիլի 1-ի
N 14-Լ հրամանի

# ԿԱՐԳ

## ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ ՈՐԱԿԵԼՈՒ ՀԱՅՏԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ

1. Գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու հայտը (այսուհետ՝ Հայտ) և դրան կից գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) լրացնում է հայտատուն (այսուհետ՝ Հայտատու) էլեկտրոնային եղանակով՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի առցանց համակարգի (private.hesc.am, այսուհետ՝ **Համակարգ**) միջոցով (համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 195-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում)՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=203841): 2025 թվականի ապրիլի 1-ից սկսած Հայտը և Ծրագիրը լրացնելու նպատակով Համակարգը հասանելի է դառնում յուրաքանչյուր եռամսյակի առաջին ամսվա առաջին աշխատանքային օրվանից մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը (Հայտի և Ծրագրի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

2. Սույն հրամանի N 1 հավելվածով հաստատված Հայտի և Ծրագրի ձևերը լրացնելու համար անհրաժեշտ է մուտք գործել Համակարգ:

3. Հայտի ձևը ձևավորվում է Համակարգի կողմից որպես .pdf ձևաչափի ֆայլ՝ ստորև ներկայացվող դաշտերը լրացնելուց և ուղարկելուց հետո.

1) Հայտատուի տվյալները՝

ա. անվանում՝ հայերեն,

բ. անվանում՝ անգլերեն,

գ. կազմակերպական-իրավական ձև (ՍՊԸ, ՓԲԸ, ԱՁ, ԲԲԸ, ՊՈԱԿ, ՈԱԿ),

դ. գրանցման հասցե,

ե. հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ),

զ. տնօրենի անուն, ազգանուն, հայրանուն (Ա.Ա.Հ.),

է. էլեկտրոնային փոստի հասցե,

ը. հեռախոսահամար,

թ. գործունեության նկարագիր.

2) Ծրագրի վերաբերյալ տվյալներ՝

ա. վերնագիր,

բ. գիտական հետազոտության և փորձարարական մշակումների աշխատանքի անվանումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված տնտեսական գործունեության դասակարգչի նկարագրի,

գ. գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների իրականացման ակնկալվող սկզբի և ավարտի օրը, ամիսը և տարին,

դ. Հարկային օրենսգրքի ո՞ր հոդվածի, ո՞ր մասի, ո՞ր կետին (121-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ, 123-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ, 150-րդ հոդվածի 1.1 մաս) համապատասխանության պարագայում է ներկայացվում.

4. Հայտի հավելված հանդիսացող դիմումի ձևն անհրաժեշտ է ներբեռնել Համակարգի «Ֆայլեր» բաժնից, լրացնել Հայտատուի ձևաթղթի վրա և վերբեռնել նույն բաժին:

5. Ծրագրի ձևը լրացնելու համար անհրաժեշտ է Համակարգի «Ֆայլեր» բաժնից ներբեռնել համապատասխան ձևը, լրացնել ստորև ներկայացվող տեղեկատվությունը և վերբեռնել նույն բաժին.

1) Ծրագրի վերնագիրը.

2) անոտացիան.

3) Ծրագրով ներկայացվող գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների անվանումը՝ ըստ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված տնտեսական գործունեության դասակարգչի նկարագրի.

4) նպատակները և խնդիրները.

5) արդի վիճակի վերլուծությունը.

6) նորույթը (novelty) և ստեղծարարությունը (creativity).

7) Ծրագրի հետազոտական մասը (մինչև 5 էջ).

8) իրականացման եղանակները, մեթոդները.

9) Ծրագրի աշխատանքների իրականացման փուլերն ու ժամկետները (օրացուցային պլանը՝ ըստ եռամսյակների).

10) Ծրագրի շրջանակում ներառված՝ բացառապես մասնագիտական աշխատանքներ կատարող վարձու աշխատողների (այսուհետ՝ Խումբ) տվյալները (անուն, ազգանուն, հանրային ծառայությունների համարանիշը (դրա բացակայության դեպքում՝ լիազորված մարմնի տրամադրած՝ հանրային ծառայությունների համարանիշի բացակայության վերաբերյալ տեղեկանքի համարը), կրթությունը հավաստող դիպլոմը): Վերջիններս լրացնելու համար Համակարգի «Ֆայլեր» բաժնից անհրաժեշտ է ներբեռնել համապատասխան .xlsx ձևաչափի ֆայլը, վերջինս լրացնել և վերբեռնել նույն բաժին.

11) տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները.

12) վերջին հինգ տարիների ընթացքում Խմբի կողմից տպագրված հրապարակումները կամ արտոնագրերը.

13) առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները, այդ թվում՝ նախատեսվող ֆինանսական միջոցները.

14) ստեղծվող աշխատատեղերը.

15) ակնկալվող արդյունքը.

16) ակնկալվող արդյունքի՝

ա. տեխնիկական ցուցանիշները,

բ. քանակական և որակական ցուցանիշները (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն),

գ. նմանակների հետ համեմատության ցուցանիշները (հիմնական տեխնիկական, տնտեսական առավելությունները և/կամ թերությունները և այլն).

17) օգտագործված գրականության ցանկը:

6. Համակարգի «Ֆայլեր» բաժին անհրաժեշտ է վերբեռնել նաև Հայտատուի պետական ռեգիստրի գրանցման էլեկտրոնային պատճենը:

7. Վերոնշյալ տվյալների մուտքագրումից հետո Հայտատուն Համակարգի միջոցով ուղարկում է Հայտը, Ծրագիրը և դրանց կից փաստաթղթերը, որից հետո իր

կողմից նշված էլեկտրոնային հասցեին ստանում է Հայտն ուղարկելու վերաբերյալ հաստատող նամակ:

8. Ուղարկված և ծածկագիր ստացած Հայտը, Ծրագիրը և դրանց կից փաստաթղթերը փոփոխման ենթակա չեն, եթե դրանք Որոշմամբ սահմանված կարգով չեն վերադարձվել լրամշակման: